**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
***«ԴՏՊ-1160-11013/Մ-3»***

«18» «01» 2022թ.

Քաղ. Երևան

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար **Սամվել Մուրադյանի** (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Խնամք» հասարակական կազմակերպությունը, ի դեմս տնօրեն **Վահագն Մաժինյանի** (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), **«Հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ համայնքահենք փոքր խմբային տներում»** ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

**1. Պայմանագրի առարկան և գինը**

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ գումարից մինչև **21 090 290 (քսանմեկ միլիոն իննսուն հազար երկու հարյուր իննսուն)** ՀՀ դրամ, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելվածում 1-ում: **Ծրագիրը իրականացվում է Լոռու մարզի Սպիտակ քաղաքում՝ ամսական 16 հաշմանդամություն ունեցող անձանց համար (շուրջօրյա խնամք):**

1.3. Պայմանագրի գինը կարող է փոփոխվել երկկողմ համաձայնությամբ՝ պայմանագրի 9.7 կետի համաձայն նոր համաձայնագիր կնքելու դեպքում:

**2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները**

**2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝**

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),



գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

**2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝**

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.2.3 նախարարության համաձայնությունը ստանալու դեպքում՝ կատարել ՀՀ պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական միջոցների հոդվածային վերաբաշխում՝ բայց ոչ ավել, քան ֆինանսական առաջարկի ծախսային յուրաքանչյուր հոդվածի 10%-ի չափով:

**2.3. Պետական մարմինը պարտավոր է՝**

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

**2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝**

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով մինչև հաշվետու **ամսվան հաջորդող ամսվա 10-ը, իսկ դեկտեմբեր ամսվա համար մինչև դեկտեմբերի 20-ը, պետական մարմին ներկայացնել հանձնման-ընդունման ակտը՝ համաձայն սույն պայմանագրի N 5 հավելվածի և հաշվետվություններ համաձայն սույն պայմանագրի N 2 և 3 հավելվածների,** ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ (այդ թվում եռամսյակային հաշվետվություն) մինչև հաշվետու ժամանակահատվածի **հաջորդ ամսվա 10-ը, իսկ դեկտեմբեր ամսվա և 4-րդ եռամսյակի համար մինչև դեկտեմբերի 20-ը:** Ծրագրի ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ամփոփ հաշվետվություն:

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

2.4.8. Սույն պայմանագրի 4.1-րդ կետով սահմանված հանձնման-ընդունման ակտի հետ միաժամանակ Նախարարություն ներկայացնել կատարված փաստացի ծախսերի վերաբերյալ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5-Ն հրամանով սահմանված տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշվառմամբ հաշվետվությունը՝ համաձայն սույն պայմանագրի N 3 հավելվածի: «Հաշվետվությանը կից անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարների մասով կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթեր, ինչպես օրինակ՝ հաշիվ ապրանքագրեր, վճարման հանձնարարականներ, աշխատաժամանակի հաշվարկի թերթիկ, աշխատավարձի հաշվարկի կամ վճարման տեղեկագրեր, ճանապարհածախսերի փոխհատուցման թերթիկ և այլն»:

**3. Մոնիթորինգը**

3.1. Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Նախարարության և/կամ նրա կողմից լիազորված կազմակերպության կամ անձի կողմից բացառապես նախօրոք մշակված հարցաթերթի միջոցով և/կամ ըստ անհրաժեշտության՝ առանց հարցաթերթի:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ և առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է կատարվող գործողությունների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով գործողություններին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր, ինչպես նաև կապ հաստատելով ծրագրի շահառուների հետ՝ նրանց շրջանում հարցում և եզրակացություն տալու նպատակով՝ առանց կազմակերպությանը տեղեկացնելու կամ ներգրավելու այս գործընթացում:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3.6. Եռամսյակային հաշվետվությունների ներկայացված և համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա բոլոր արդյունքային ցուցանիշների կատարողականը գնահատվում է համապատասխան վարչության կողմից՝ ըստ անհրաժեշտության ամփոփ վերլուծությունների և մոնիթորինգի վարչության հետ համատեղ:

**4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը**

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը էլեկտրոնային համակարգի միջոցով պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (հավելված N 5) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2 Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3 Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2

կետում նշված ժամկետում էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

**5. Վճարման կարգը և ժամկետները**

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հանձնման-ընդունման ակտի հիման վրա՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 4) նախատեսված ամիսներին, ըստ պայմանագրի շրջանակներում փաստացի իրականացված միջոցառումների կատարման արդյունքի:

Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

**6. Կողմերի պատասխանատվությունը**

6.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3 Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ

6.5 Պետական մարմնի կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

**7. Պայմանագրի գործողության ժամկետը**

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը: Սույն պայմանագրի գործողությունը տարածվում է կողմերի միջև 2022 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

**8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**9. Եզրափակիչ դրույթներ**

9.1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված դրամաշնորհային ծրագիրը (դրամաշնորհային ծրագիրը՝ պետք է բխի միջոցառումների նկարագրի պահանջներից և մեթոդական ցուցումներից) հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը (հավելված 6 ):

9.2 այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3. Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4. կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ https://www.mlsa.am/?cat=142 կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

9.5. Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը

միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.6. Պայմանագրով ստանձնած պարտավորությունը դադարում է կատարման անհնարինությամբ, եթե դա առաջացել է այնպիսի հանգամանքից, որի համար կողմերից որևէ մեկը պատասխանատու չէ՝ պայմանագրի կատարման անհնարինության մասին ողջամիտ ժամկետում գրավոր ծանուցելով մյուս կողմին: Այդ դեպքում կողմերը իրավունք չունեն միմյանցից պահանջելու պարտավորության կատարում: Սույն կետում նշված պայմանագրի կատարման անհնարինության մասին ողջամիտ ժամկետում մյուս կողմին չծանուցելու դեպքում՝ չծանուցող Կողմը պարտավորվում է մյուս կողմին վճարել տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գնի 1 %-ի չափով:

9.7. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.8. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.9. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ք. Երևան, Կառավարական տուն-3<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011039675<br>ՀՎՀՀ՝ 01506515<br>Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան<br>______________<br>(անուն ազգանուն, ստորագրություն)<br>Կ. Տ. | *Անվանումը*՝ «Խնամք» հասարակական կազմակերպություն<br>*Հասցեն*՝ ՀՀ, ք. Երևան, Մոլդովական 2-1<br>"Ամերիաբանկ" ՓԲԸ<br>Հ/Հ 1570002500330100<br>ՀՎՀՀ՝ 00845121<br>Տնօրեն՝ Վահագն Մաժինյան<br>______________<br>(անուն ազգանուն, ստորագրություն)<br>Կ. Տ. |

**Հավելված 1**
2022 թ. «01» «18» -ին
կնքված N *ԴՏՊ-1160-11013/Մ-3* պայմանագրի

# «ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՇՈՒՐՋՕՐՅԱ ԽՆԱՄՔԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԱՀԵՆՔ ՓՈՔՐ ԽՄԲԱՅԻՆ ՏՆԵՐՈՒՄ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԱՐԿ

**Համառոտագիր**

«Խնամք» հասարակական կազմակերպությունը 2000թվ-ից իրականացրել է հոգեկան առողջության երկարատև խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի մատուցման ծրագրեր ք.Երևանի տարբեր համայնքներում և Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքում:

2016 թվականից Լոռու մարզի Սպիտակ քաղաքում իրականացնում ենք «Սպիտակի խնամքի տուն» ծրագիրը, որի նպատակը հոգեկան առողջության խնդիրներ ունեցող թվով 16 չափահաս անձանց կացարանով ապահովումը և, շուրջօրյա խնամքի ու սոցիալական վերականգնման ծառայությունների տրամադրման միջոցով, նրանց սոցիալական ներառումն է հասարակություն:

Խնամքի տան շահառուները հոգեկան առողջության խնդիրներ ունեցող այն անձինք են, ում ինքնասպասարկման և սոցիալական հմտությունները հիմնականում պահպանված են և նրանք կարող են մասամբ ինքնուրույն կենցաղավարել (մասամբ՝ սոցիալական սպասարկողի օգնությամբ), սակայն չունեն կացարան և/կամ ընտանիք, կամ ընտանիքը դժվարանում է նրանց խնամել: Շուրջօրյա խնամքի ծառայությունները տրամադրվում են փոքր խմբային տանը՝ առավելագույնս ընտանեկանին մոտ պայմաններում:

2018թվ-ից կազմակերպությունը ստանում է մասնակի ֆինանսավորում ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությոն կողմից:

Ծրագիրն իրականացվում է ք.Սպիտակ, Իտալական թաղամաս 10 հասցեում՝ «Խնամք» հասարակական կամակերպությանը անհատույց տրամադրված տարածքում (ընդհանուր մակերեսը՝ 380 քմ, բակ 1000ք.մ, տաղավար):

Սպիտակի խնամքի տանը խնամվողների համար ստեղծված են ընտանեկանին նման պայմաններ: Տան յուրաքանչյուր 2 բնակչի համար գործում է մեկ ննջասենյակ՝ կից սանհանգույցով և լոգարանով: Տունն ապահովված է արտթերապիայի սենյակով, հյուրասենյակով (42,4քմ), ճաշասենյակով(42,4քմ) և խոհանոցով (17քմ), լվացքասենյակով (11քմ), մասնագետների հետ անհատական հանդիպումների սենյակներով: Տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց համար առկա է թեքահարթակ: Ունենք 2800քմ-ից ավելի հողակտոր, որի մշակումից ստացված բերքը ոչ միայն լրացնում է անհրաժեշտ սննդի մի զգալի մասը, այլ նաև ընձեռնում է աշխատանքային թերապիայի լավ հնարավորություն:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շուրջօրա խնամքի մատուցման ծառայության (այսուհետ Խնամքի տուն) հիմնական նպատակն է նպաստել հոգեկան առողջության խնդիրներ և/կամ հաշմանդամություն ունեցող 16 անձանց (այսուհետ՝ շահառու) սոցիալ-հոգեբանական վերականգնմանը, հասարակություն ներառմանն ու կյանքի որակի բարելավմանը, վերադարձ ընտանիք (առկայության դեպքում) կամ անկախ կյանք:

Շահառուն Խնամքի տուն է ընդունվում սոցիալական աջակցության մարմնի ուղեգրի հիման վրա, որին նախորդում է սոցիալական աշխատողի (դեպք վարողի) կողմից անձի կարիքների գնահատումը և համապատասխան մասնագիտացված բժշկական կազմակերպության եզրակացությունը:

Շահառուի՝ Խնամքի տուն ընդունելությունից հետո մասնագիտական խումբը՝ սոցիալական աշխատող, հոգեբան, իրավաբան, մշակում է շահառուի վերականգնման անհատական պլանը, կատարում կարիքների գնահատում/վերագնահատում և ապահովում անհատական սոցիալական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամկետներում՝ համագործակցելով միասնական սոցիալական ծառայության դեպք վարողի հետ, ինչպես նաև ապահովում է հետադարձ կապը սոցիալական դեպքի վարման և փակման գործընթացում,

անհրաժեշտության դեպքում՝ խորհրդակցելով հոգեբույժի հետ: Այդ ծրագրերը կազմվում են այցելուի ընդունման առաջին օրերի ընթացքում և պարբերաբար վերանայվում են՝ ըստ գործող չափորոշիչների:

Խնամքը ներառում է սոցիալական, հոգեբանական, իրավաբանական խորհրդատվություն, արտթերապիա, սոցիալական սպասարկողների կողմից կենցաղային հարցերում աջակցություն, որոնք տրամադրվում են անհատական վերականգնման ծրագրերին համապատասխան:

**Խնամքի տանը տրամադրվող ծառայությունները.**

- կացարանի տրամադրում՝ համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 17-ի 1533-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչների
- անհրաժեշտ կահույքով ապահովում
- ապահովում անհրաժեշտ հագուստով, սպիտակեղենով, կոշկեղենով՝ տարիքասեռային առանձնահատկություններին և եղանակային պայմաններին համապատասխան, անկողնային պարագաներով, անձնական հիգիենայի պարագաներով,
- սննդի տրամադրումը՝ օրական նվազագույնը երեք անգամ. անհրաժեշտության դեպքում համապատասխան դիետա,
- սոցիալ-հոգեբանական վերականգնողական օգնության տրամադրում
- առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը՝ տեղամասային պոլիկլինիկայի միջոցով.
- հոգեբույժի խորհրդատվություն
- իրավական խորհրդատվության տրամադրումը.
- անհրաժեշտության դեպքում պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովումը
- բժշկասոցիալական փորձաքննության իրականացման անհրաժեշտության դեպքում անհրաժեշտ բժշկական փաստաթղթերի ձեռքբերման, նախապատրաստման, բժշկական կազմակերպություններ ուղեկցման և այլ հարցերում աջակցում.
- անհրաժեշտության դեպքում հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություն ուղեգրում,
- ազատ ժամանցի, մշակութային միջոցառումների կազմակերպում, տոների և ծննդյան օրվա նշում,
- աշխատանքային թերապիա,
- արտ-թերապիայի խմբակներ. նկարչություն, գոբելեն, կավագործություն, բացիկների պատրաստում, ֆոտոնկարչություն,
- համակարգչային սենյակ, բաց և հասանելի ինտերնետ կապ,
- սոցիալական սպասարկողների և սպասարկող խոհարարի աջակցություն՝ ինքնասպասարկման ունակությունների զարգացման և կենցաղավարման հմտությունների ուսուցանման/վերականգնման նպատակով. մասնակցության ապահովում սենյակների մաքրման և խոհանոցային աշխատանքներին:

***Սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական պլանի ձև***

ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաշվառման համարը ____________________

Հաշվառման ամսաթիվը ____________________

1. Ազգանունը, անունը, հայրանունը ____________________________

2. Ծննդյանամսաթիվը ________________________________

3.Փաստացի բնակության վայրը (հեռախոսահամարը)

________________________________________________________________

7. Կարիքները՝

1) սոցիալական ____________________________________________

________________________________________________________________

2) հոգեբանական __________________________________________

______________________________________________

3) բժշկական ______________________________________________

______________________________________________

4. Լրացուցիչ տվյալներ ______________________________________________

______________________________________________

5. Անձի վերականգնմանը և զարգացմանն ուղղված միջոցառումներ՝

1) սոցիալական վերականգնմանը և զարգացմանն ուղղված միջոցառումներ

| Վերականգնողական միջոցառումը և ծառայությունների տեսակները | Կատարողը | Ժամկետները | Ակնկալվող արդյունքը |
|---|---|---|---|
| | | | |
| | | | |
| | | | |

2) հոգեբանական վերականգնմանը և զարգացմանն ուղղված միջոցառումներ

| Վերականգնողական միջոցառումը և ծառայությունների տեսակները | Կատարողը | Ժամկետները | Ակնկալվող արդյունքը |
|---|---|---|---|
| | | | |
| | | | |
| | | | |

3) բժշկական վերականգնմանը և զարգացմանն ուղղված միջոցառումներ

| Վերականգնողական միջոցառումը և ծառայությունների տեսակները | Կատարողը | Ժամկետները | Ակնկալվող արդյունքը |
|---|---|---|---|
| | | | |
| | | | |

***Նախնական գնահատման թերթիկի ձև***

Վերջնական գնահատումը և հետագա վերագնահատումները կատարվում են ԱՍՀՆ կողմից մշակված ձևաչափով

Եզրակացություն

մասնագիտական խմբի

Եզրակացության տրման օրը, ամիսը, տարին ____________________

Քաղաքացի/ դիմող ____________________

Ծննդյան օրը, ամիսը, տարին ____________________

Սեռ ____________________

Հաշմանդամություն ունի/ չունի (նշել), եթե ունի՝ նշել խումբը ________

Աշխատանք ունի/ չունի (նշել

Կրթություն

Ախտորոշումը ______________________________________________

Մասնագիտական խումբը գնահատելով քաղաքացու՝

Հոգեկան առողջության վիճակը (անհրաժեշտը նշել)

- նվազագույն դեֆիցիտար խանգարումներ և առավելագույն անձի պահպանվածություն
- արտահայտված դեֆիցիտար խանգարումներ և անձի իջեցում
- խիստ արտահայտված դեֆիցիտար խանգարումներ և թուլամտություն
- այլ

Սոցիալ-հոգեբանական վիճակը (անհրաժեշտը նշել)

- կարողությունները գրեթե ամբողջությամբ պահպանված են
- կարողությունները հիմնականում կամ մասամբ պահպանված են
- կարողությունները սահմանափակ են
- կարողությունները խիստ սահմանափակ են կամ իսպառ բացակայում են

- այլ

Սոցիալական վիճակը (անհրաժեշտը նշել)

- ունի կացարանի կարիք
- չունի կացարանի կարիք
- չունի ընտանիք, կամ այլ հարազատ, որոնք հոգ են տանում նրա մասին
- ունի ընտանիք, սակայն ընտանիքում պատշաճ խնամք չի ստանում
- այլ

Որոշում է քաղաքացի ______________________________

կարող է ընդգրկվել «Ա,Բ,Գ» խմբում և ստանալ խնամքի ծառայություններ /նշել խումբը և անհարաժեշտ ծառայությունը______________________________

Հանձնաժողովի անդամներ. ______________________________

Կազմակերպությունը ծրագրի նկարագրում ներկայացված աշխատանքների իրականացման վերաբերյալ նախարարություն է ներկայացնում ամենամսյա, եռամսյակային հաշվետվություններ՝ նախարարության կողմից հաստատված ձևերին համապատասխան:

Կենտրոնն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է.

- «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքով
- «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով
- ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 17-ի N 1533-Ն որոշմամբ
- «Հոգեբուժական օգնության մասին» օրենքով,
- ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի «Երեխաների, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը և պայմանները սահմանելու, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N1112-Ն որոշումով,
- ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 27-ի «Պետության կողմից երաշխավորված՝ պետական մարմինների ենթակայության ներքո գտնվող սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների կողմից անվճար տրամադրվող սոցիալական ծառայությունների ու սոցիալական աջակցության վճարովի ծառայությունների ցանկերը և սոցիալական աջակցության վճարովի ծառայությունների տրամադրման, սոցիալական աջակցության վճարովի ծառայություններից ձևավորված ֆինանսական միջոցներից սոցիալական աջակցության ֆինանսավորման դեպքերն ու կարգը սահմանելու մասին» N 1112-Ն որոշումով,
- ոլորտը կանոնակարգող այլ իրավական ակտերով:

**Ծրագրի նկարագրություն**

Հայաստանի Հանրապետությունում հաշվառված է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող ավելի քան 50000 մարդ, որը կազմում է հանրապետության բնակչության շուրջ 2%-ը: Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանցից հաշմանդամություն ունի 23350-ը, որոնցից հաշմանդամ երեխա կարգավիճակ՝ 2445-ը: Եթե հաշվի առնենք նաև այն փաստը, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող ոչ բոլոր անձինք են հաշվառված, ապա պարզ է դառնում, որ բնակչության մի ստվար զանգված սոցիալական աջակցություն ստանալու հնարավորություններից դուրս են: Մյուս կողմից, վերջին հինգ տարիների ընթացքում, ավելի քան 6000-ով ավելացել են միայն հաշվառված անձանց թիվը՝ ըստ ՀՀ ԱՆ տվյալների:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց այսօր տրամադրվում են հոգեբուժական, հոգեբանական, սոցիալական, սոցիալ-վերականգնողական և խնամքի ծառայություններ, ինչպես հաստատություններում, այնպես էլ դրանցից դուրս՝ պետական և ոչ պետական կազմակերպությունների կողմից (այս ծառայություններում ընդգրկված անձանց քանակը մոտ 1000 է), սակայն այդ ծառայությունները բավարար չեն: Տարբեր կազմակերպությունների, այդ թվում նաև մեր կազմակերպության, ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարության «սպասման ցուցակներում» կան բավականին հաշվառված անձինք: Սա խոսում է խնամքի ծառայությունների խիստ

կարիքի մասին: Ավելին, կարիքավոր անձանց մեծ մասը, իրազեկվելով սպասման հերթերի մասին, նույնիսկ չի հերթագրվում:

Այսպիսով, հանրապետությունում համապատասխան խնամքի ծառայությունների կարողությունները՝ տնային, ցերեկային, սատարվող կացարաններ, զբաղվածության և սոցիալ-հոգեբանական վերականգնողական, բավարար չեն հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կարիքներին: Ընտանիքում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անդամ ունեցողները միայնակ են մնում իրենց խնդիրների հետ: Մի կողմից, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձինք մրցակից չեն աշխատաշուկայում, մյուս կողմից, նրանց ընտանիքի անդամները, եթե նրանք առկա են, երկար ժամանակ են տրամադրում իրենց հաշմանդամ հարազատին, որի պատճառով ունենում են խնդիրներ աշխատատեղերում՝ իրենք հայտնվելով կյանքի դժվարին պայմաններում:

Ելնելով այս ամենից, կարող ենք փաստել, որ առկա է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց տրամադրվող աջակցման տարբեր համայնքային ծառայությունների խիստ անհրաժեշտություն, այդ թվում նաև համայնքային փոքր տների, քանի որ *այս պարագայում անձը մնում է իր համայնքում, իրեն հարազատ միջավայրում:*

Խնամքի տան ծրագիրը նպաստում է հոգեկան առողջության խնդիրներ և/կամ հաշմանդամություն ունեցող անձանց համայնքում ապրելու իրավունքի իրացմանը, նրանց սոցիալական ներառմանը հասարակություն, ապաինստիտուցիոնալացման գործընթացի արդյունավետ իրականացմանը և բխում է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթներից: Շահառուները գտնվում են իրենց համայնքում, ոչ թե հեռավոր հաստատություններում՝ կտրված համայնքային կյանքից: Ընտանքի անդամները կարող են հաճախակի այցելել իրենց հարազատին, կամ որոշ ժամանակով նաև նրան ուղեկցել տուն: Շահառուն լիովին չի կտրվում իր ընտանիքից և համայնքից, ապրում է համայնքում, սովորում է ինքնուրույն կյանքին: Իսկ այն շահառուները, ովքեր չունեն հարազատներ և բնակության վայր, ապահովվում են ընտանեկան պայմաններին մոտ կենցաղով և հարաբերություններով:

**Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները**

Ծրագրի հիմնական նպատակն է հոգեկան առողջության խնդիրներ և/կամ հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց կացարանով ապահովումը և սոցիալական ներառումը հասարակություն՝ շուրջօրյա խնամքի ու սոցիալական վերականգնման ծառայությունների տրամադրման միջոցով:

***Անկախ կյանք վարելու ունակության ձեռքբերումը մեր վերջնական նպատակն է:***

Խնդիրները.

- շահառուներին անհրաժեշտ բնակելի տարածքով և կոմունալ-կենցաղային այլ պայմաններով ապահովում
- խմբային տան շահառուների կարիքների գնահատում
- սոցիալ-վերականգնողական անհատական ծրագրերի կազմում և վերանայում՝ ըստ գործող չափորոշիչների
- սոցիալ-հոգեբանական խորհրդատվության տրամադրում՝ համաձայն անհատական ծրագրերի
- աջակցություն խմբային տան շահառուներին աշխատանքի տեղավորման հարցում. համագործակցելով տարածքի զբաղվածության ծառայության կենտրոնի հետ.
- աշխատանքային թերապիայի տարբեր տեսակներով զբաղվածության ապահովում
- մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում
- իրավունքների, կարողությունների, հմտությունների զարգացմանն ուղղված թրեյնինգների կազմակերպում,
- կենցաղավարման հմտությունների զարգացում

Ծառայությունների մատուցման սկզբունքները.

- ծառայության մատչելիություն և հասանելիություն, հանրության տեղեկացվածություն ծառայության, դրա նպատակի և բովանդակության մասին
- անհատական մոտեցում
- մասնակցություն. այցելուների և ընտանիքի մասնակցությունը խնամքի պլանավորման և տրամադրման գործընթացում
- գաղտնիություն. անձնական տվյալների գաղտնիության ապահովում
- խտրականության բացառում
- փոխադարձ վստահության վրա հիմնված հարաբերությունների ստեղծում /շահառուների և մասնագետների միջև/
- շահառուների մոտ առաջացած խնդիրներին արագ արձագանքում
- աջակցություն սոցիալական միջավայրում հարաբերությունների հաստատմանը
- փոխօգնության պայմանների ստեղծման նպաստում
- ընտանեկան կապերի ամրապնդման աջակցում
- համագործակցութուն միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների, առաջնային բժշկական ծառայություններ մատուցող կազմակերպությունների, մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ մատուցող առողջապահական կազմակերպությունների, ոլորտում գործող այլ կառույցների հետ:

*Ծրագրի ակնկալվող արդյունքները,*

- կենցաղային և աշխատանքային հմտությունների վերականգնում,
- հոսպիտալացման ցուցանիշի ցածրացում,
- ինքնագնահատականի բարձրացում,
- անկախ կյանք վարելու հմտությունների զարգացում, հասարակության համար «բեռ» լինելուց անցումը հավասար անդամի
- մասնագիտական հմտությունների վերականգնում (եթե ունեցել են մասնագիտություն), և նոր մասնագիտության ընտրություն
- վերադարձ ինքնուրույն-արժանապատիվ կյանքին
- խտրականության վերացում համայնքի կողմից

*Գնահատում և մոնիթորինգ*

- *խնամվողները բավարարված են իրենց մատուցված ծառայություններից.*
  խնամվողները և նրանց հարազատները լրացնում են անանուն գնահատման թերթիկներ յուրաքանչյուր աշխատակցի համար
- *վերադարձ ընտանիք*
- հոսպիտալիզացիայի ցուցանիշի անկում,
- զբաղվածության ապահովում
- ամսական հաշվետվություն անձնակազմի յուրաքանչյուր անդամի կողմից, որով գնահատվում է յուրաքանչյուր աշխատակցի գործունեությունը:
- խնամքի ծառայությունները համապատասխանում են գործող չափորոշիչներին.
- շահառուների ցանկ. ոչ պակաս, քան նախատեսված է ծրագրի սկզբում
- կատարված աշխատանքներրի պատշաճ փաստաթղթավորում
- ամենամսյա, եռամսյակային և տարեկան հաշվետվության ներկայացում նախարարություն:

*Պլան-ժամանակացույց.*

Խնամքը տրամադրվում է շուրջօրյա՝ ք.Սպիտակ, Իտալական թաղ. 10 հասցեում, շահառուների գնահատված սոցիալական կարիքներին և կնքված պայմանագրին համապատասխան՝ նշելով մատուցված ծառայությունների տեսակներն ու դրանց մատուցման պարբերականությունը: Կատարված աշխատանքները գրանցվում են համապատասխան մատյաններում և անհատական քարտերում:
Հունվարից կկատարվի բոլոր այցելուների կարիքների գնահատում/վերանայում բազմամասնագիտական խմբի կողմից (սոցիալական աշխատող, հոգեբան, իրավաբան)՝ ընթացիկ ժամանակահատվածի համար, որը վերանայվում է առնվազն եռամսյակը մեկ:
Միաժամանկ կսկսվի աջակցության տրամադրումը՝ ըստ անհատական վերականգնողական ծրագրերի. սոցիալական աշխատողի, հոգեբանի խորհրդատվություններ՝ հաստատված չափորոշիչներին

համապատասխան, բժշկական խորհրդատվության ապահովում, սոցիալական սպասարկողների աջակցություն:

Վերջնաժամկետը 31.12.2022թ:

**Կազմակերպության փորձառությունը**

«Խնամք» հկ առաքելությունն է նպաստել հաշմանդամների, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ինտեգրմանը հասարակության մեջ: Ինտեգրման առաջին և կարևոր քայլ ենք համարում համայքային աջակցման ծառայությունների համակարգը՝ համատեղ աշխատող տնային, ցերեկային, շուրջօրա, կրիզիս կենտրոններ, շահերի պաշտպանութուն, կրթություն, զբաղվածություն:
Այս սկզբունքները ամրագրված են կազմակերպության կանոնադրությամբ:

Կազմակերպությունը 2000թվ-ից իրականացրել է հոգեկան առողջության երկարատև խնդիրներ և հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի մատուցման ծրագրեր ք.Երևանի տարբեր համայնքներում և Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքում, 2016թվ-ից առ այսօր «Շուրջօրյա խնամքի տուն» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար Սպիտակ քաղաքում, 2020թվ-ին՝ «Ցերեկային խնամք» տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց համար Սպիտակ և հարակից գյուղական համայնքներում, 2020թվ-ից առ այսօր՝ «Տնային խնամք» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար՝ ք.Երևանում:

**Գործողություններ**

*ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ*

*Կազմակերպություն* ***Խնամք հասարակական կազմակերպություն***
*Ծրագիր* ***«Շուրջօրա խնամքի ծառայություններ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար»***
*Ժամանակահատված* ***01.01.2022-31.12.2022***

| Հ/Հ | Ծրագրի խնդիրները | Գործողություններ և մեթոդները | Պատասխանատու | Ամիս | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1 | *Շահառուների գրանցում՝ ըստ դիմելիության* | *1.1 համագործակցութուն ՄՍԾ պարածքային կենտրոնների, առաջնային բժշկական ծառայությունների մատուցող կազմակերպությունների, մասնագիտացված հոգեբուժական ծառայություններ մատուցող առողջապահական կազմակերպությունների, ոլորտում գործող այլ կառույցների հետ*<br>*1.2 Ծառայության մասին իրազեկում վերոնշյալ կազմակերպությունների միջոցով* | *Ծրագրի տնօրեն, բժիշկ, սոց. Աշխատող*<br>*Ծրագրի տնօրեն, բժիշկ, սոց. աշխատող* | | | | | | | | | | | | |
| 2 | *Շահառուների գնահատում՝ ըստ դիմելիության և* | *2.1 շահառուների անհատական կարիքների գնահատում մասնագետների խմբի կողմից. ըստ խմբերի* | *սոցիալական աշխատող, հոգեբան,բժիշկ* | | | | | | | | | | | | |

| | | | |
|---|---|---|---|
| | չափորոշիչներ ի | | |
| 3 | Պայմանագրե րի կնքում ըստ դիմելիության | 3.1 Պայմանագրի կազմում շահառուի և/կամ խնամակալի հետ՝ նշելով մատուցվող ծառայությունների ցանկը, մատուցման ժամանակացույցը (կազմվում է՝ հաշվի առնելով շահառուի և ընտանիքի առաջարկությունները և ցանկությունները) | Ծրագրի տնօրեն, սոց. աշխատող |
| 4 | Ծառայություններ ի մատուցում<br><br>Ըստ անհատական ծրագրերի | 4 Կացարանի տրամադրում<br>4.1 Սոցիալ-հոգեբանական վերականգնողական օգնության տրամադրում<br>4.2 Ապահովում անհրաժեշտ կահույքով, հագուստով, սպիտակեղենով, կոշկեղենով՝ պարիքասեռային առանձնահատկություններին և եղանակային պայմաններին համապատասխան, անկողնային պարագաներով, անձնական հիգիենայի պարագաներով<br>4.3 սննդի տրամադրումը՝ օրական նվազագույնը երեք անգամ,<br>4.4 առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը՝ տեղամասային պոլիկլինիկայի միջոցով.<br>4.5 Հոգեբույժի խորհրդատվություն<br>4.6 իրավական խորհրդատվության տրամադրում.<br>4.7 պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովումը` անհրաժեշտության դեպքում.<br>4.8 բժշկասոցիալական փորձաքննության իրականացման անհրաժեշտության դեպքում անհրաժեշտ բժշկական փաստաթղթերի ձեռքբերման, նախապատրաստման, բժշկական կազմակերպություններ ուղեկցման և այլ հարցերում աջակցելը.<br>4.9 հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություն ուղեգրում<br>4.10 ազատ ժամանցի, մշակութային միջոցառումների կազմակերպում,<br>4.11 աշխատանքային թերապիան. | Սոց.աշխատող, հոգեբան, արտ-թերապևտ<br><br>Սոց.աշխատող, տնտեսուհի<br><br>տնտեսուհի, սպասարկող-խոհարար<br>սոց.աշխատող, բժիշկ<br><br>Բժիշկ<br>Իրավաբան<br><br>Բժիշկ, սոց.աշխատող<br><br>Սոց.աշխատող<br><br>Բժիշկ<br><br>Միրոցառումներ ի կազմակերպիչ, |

| | | | |
|---|---|---|---|
| | | 4.12Արտ-թերապիայի խմբակներ<br>4.13 սենյակների մաքրման և խոհանոցային աշխատանքներին մասնակցություն՝ ինքնասպասարկման ունակությունների զարգացման և կենցաղավարման հմտությունների ուսուցանման նպատակով | Արտ-թերապևտ, սոց աշխատող<br><br>Սոց.սպասարկող, խոհարար |
| 5 | Գնահատում և մոնիթորինգ, շարունակական | 5.1 սոցիալ-հոգեբանական վերականգնողական օգնության տրամդրում<br>5.2 սոցիալական ներառումը հասարակություն<br>5.3 կյանքի որակի բարելավում<br>5.4 կենցաղային պայմանների բարելավում<br>5.5 խորհրդատվության տրամադրում՝ նրանց կյանքում առաջացած իրավիճակներին համապատասխան<br>5.6 համայնքի բնակիչների շրջանում ոչ խտրական վերաբերմունքի ձևավորումը<br>5.7 Ծառայության որակի բարելավում<br>5.8 անհատական մոտեցման ապահովում<br>5.9 կարիքների գնահատման շարունակականություն<br>5.10 Անձնակազմի հաշվետվություններ<br>5.11 Կազմակերպության հաշվետվություններ | Սոց.աշխատող, հոգեբան |
| | Հաշվետվությունների կազմում ամսեկան, եռամսյակային | 6.1 Անձնակազմի ամենամսյա հաշվետվություն<br>6.2 Անհատական պլանների վերանայում<br>6.3 Կազմակերպության ամենամսյա հաշվետվոյթուններ | Սոց.աշխատող, հոգեբան, սոց.սպասարկողներ, արտ-թերապևտ Տնօրեն, հաշվապահ |
| | | 6.4 Կազմակերպության եռամսյա հաշվետվոյթուններ | Տնօրեն, սոց.աշխատող, հոգեբան,արտ-թերապևտ |

**Ծրագրի շահառուները ու շահագրգիռ կողմերը**

Կազմակերպության կողմից շուրջօրա խնամքի ծառայություններից կարող են օգտվել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, կացարանի և խնամքի ու այլ սոցիալական ծառայությունների կարիք ունեցող 18 տարին լրացած հոգեկան առողջության խնդիրներ և/կամ հաշմանդամություն ունեցող այն անձինք, որոնց ինքնասպասարկման ունակությունները և սոցիալական հմտություններն ու կարողությունները հիմնականում պահպանված են և նրանք կարող են ինքնուրույն ապրել, կենցաղավարել (մասամբ՝ սոցիալական սպասարկողի օգնությամբ), սակայն չունեն կացարան ու ընտանիք, կամ էլ ընտանիքը հրաժարվել է նրանց խնամքից: Ծառայություններից կարող են օգտվել միաժամանակ թվով 16 շահառուներ:

Նրանք կլինեն ծրագրի անմիջական շահառուները: Շահառուների ընդգրկման մեթոդաբանությունը նշվեց վերը:

Խնամքի ծառայությունների շահառուներեն նաև ընտանիքի անդամները. ծառայությունը վերցնում է նրանց ծանրաբեռնվածությունը, որի արդյունքում թեթևանում է նրանց հոգսը, ընտանիքի անդամները ավելի մեծ ժամանակ են տրամադրում իրենց և իրենց աշխատանքին: Մյուս կողմից, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք, որոշակի ժամանակ ստանալով վերոհիշյալ ծառայությունները, ավելի պատրաստ են լինում անկախ և ինքնուրույն ապրելուն, կարող են վերադառնալ ընտանիք և իրենք հոգալ ընտանիքի որոշ կարիքներ: Այս պարագայում ընտանիքի անդամները շահագրգիռ են ծրագրի հաջող իրականացման մեջ:

Շահագրգիռ կողմ կարող ենք համարել նաև համայնքը և ողջ հասարակությանը, ուր ձևավորվում է ավելի հանդուրժող և ոչ խտրական միջավայր: Բացի այդ, համայնքային փոքր տներում խնամքի ծառայությունների ներդրման և ընդլայնման միջոցով խնայվում են հասարակական միջոցները՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ավելի թանկարժեք բժշկական ծառայություններ ստիպված ուղղորդումները բացառելու ճանապարհով:

**Ռիսկերի գնահատում**

Վերջին երկու տարիների փորձառությունը ցույց է տվել ծրագրի իրականացման համար բարդություն, որը կայացել է Կովիդ-19 համավարակի հետ: Դժվարացել են համայնքային շփումները, շահառուների ընտանիքի անդամների այցերը հազվակի են դարձել: Այդ ամենը բերել է ինտեգրացիային ուղղված միջոցառումների կազմակերպման դժվարությունների: Սակայն այդ դժվարությունները հաղթահարվել են. բացատրվել է նման իրավիճակի անխուսափելիությունը ողջ հասարկության համար, անհրաժեշտության դեպքում տրամադրվել է լրացուցիչ տրանսպորտային միջոց փոքր մեկուսացված էքսկուրսիաների համար: Խնամքի տան բոլոր շահառուները և անձնակազմը ապահովվել են անձնական պաշտպանական միջոցերով: Այնուհետ նաև պատվաստվել են՝ ինչպես անձնակազմը, այնպես էլ շահառուները՝ հաշվի առնելով նրանց և հարազատների/օրինական ներկայացուցիչների ցանկությունը և համաձայնությունը:

| **ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ** | **ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ** |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ք. Երևան, Կառավարական տուն-3<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011039675<br>ՀՎՀՀ՝ 01506515<br>Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան<br>(անուն ազգանուն, ստորագրություն)<br>Կ. Տ. | *Անվանումը՝* «Խնամք» հասարակական կազմակերպություն<br>*Հասցեն՝* ՀՀ, ք. Երևան, Մոլդովական 2-1<br>"Ամերիաբանկ" ՓԲԸ<br>Հ/Հ 1570002500330100<br>ՀՎՀՀ՝ 00845121<br>Տնօրեն՝ Վահագն Մաժինյան<br>(անուն ազգանուն, ստորագրություն)<br>Կ. Տ. |

Հավելված 2
2022 թ. «01» «18» -ին
կնքված N ԴՏՊ-1160-11013/Մ-3պայմանագրի

## Դրամաշնորհային հաշվետվություն N____________

### 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | |
| Դրամաշնորհի N | |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | |
| Ծրագրի իրականացման ժամանակահատված | |
| Հաշվետու ժամանակահատված | |
| Ներկայացման օր | |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | |

### 2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

| |
|---|
| |

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

| |
|---|
| |

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

| |
|---|
| |

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

| |
|---|
| |

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

| |
|---|
| |

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

| |
|---|
| |

| ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ք. Երևան, Կառավարական տուն-3<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011039675<br>ՀՎՀՀ՝ 01506515<br>Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան<br><br>____________________<br>(անուն ազգանուն, ստորագրություն)<br>Կ.Տ. | *Անվանումը՝* «Խնամք» հասարակական կազմակերպություն<br>*Հասցեն՝* ՀՀ, ք. Երևան, Մոլդովական 2-1<br>"Ամերիաբանկ" ՓԲԸ<br>Հ/Հ 1570002500330100<br>ՀՎՀՀ՝ 00845121<br>Տնօրեն՝ Վահագն Մաֆինյան<br><br>____________________<br>(անուն ազգանուն, ստորագրություն)<br>Կ. Տ. |

Հավելված N 3
2022թ. «01» «18»
N ԴՏՊ-1160-11013/Մ-3 պայմանագրի

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 202__ թվականի պետական բյուջեի---------------------------ամսում փոփոխուն ծախսերի գծով փոխհատուցման ենթակա և հաստատուն ծախսերի գծով փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ

| Ծախսային հոդվածներ | | Հաստատված նախահաշվի գումարը | | Հաշվետու ժամանակահատվածում | | | Տարեսկզբից աճողական | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը | ծածկագիրը | Պետական բյուջեից | Այլ միջոցներից նախատեսված | Նախատեսված գումարը | Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը | Այլ միջոցներից կատարված դրամական միջոցներ | Նախատեսված գումարը | Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը | Այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր | Այլ աղբյուրների անվանումները |
| 1 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ | x | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | |
| Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4100 | | | | | | | | | |
| Էներգետիկ ծառայություններ | 4212 | | | | | | | | | |
| Կոմունալ ծառայություններ | 4213 | | | | | | | | | |
| Կապի ծառայություններ | 4214 | | | | | | | | | |
| Ապահովագրական ծախսեր | 4215 | | | | | | | | | |
| Գույքի և սարքավորումների վարձակալություն | 4216 | | | | | | | | | |
| --------- | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |

| ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | *Անվանումը՝* «Խնամք» հասարակական կազմակերպություն |
| ք. Երևան, Կառավարական տուն-3 | *Հասցեն՝* ՀՀ, ք. Երևան, Մոլդովական 2-1 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | "Ամերիաբանկ" ՓԲԸ |
| Հ/Հ 900011039675 | Հ/Հ 1570002500330100 |
| ՀՎՀՀ՝01506515 | ՀՎՀՀ՝ 00845121 |
| Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան | Տնօրեն՝ Վահագն Մաժինյան |
| (անուն ազգանուն, ստորագրություն) | (անուն ազգանուն, ստորագրություն) |
| Կ. Տ. | Կ. Տ. |

**Հավելված 4**
2022թ. «01» «18» -ին
կնքված N ԴՏՊ-1160-11013/Մ-3 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ հազ. դրամ

| Միջոցառման | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը | անվանումը | Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| Լոտ 4 մարզ | 99999999/562 | «Հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ համայնքահենք փոքր խմբային տներում» Մարզ | 1757.5 | 3513.6 | 5272.6 | 7023.1 | 8794.7 | 10545.1 | 12295.6 | 14067.2 | 15817.7 | 17504.9 | 19318.7 | 21090.290 | **21090.290** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է մինչև ֆինանսական միջոցների նախատեսումը, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:
** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

| **ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ** | **ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ** |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ք. Երևան, Կառավարական տուն-3<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011039675<br>ՀՎՀՀ՝01506515<br>Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան<br>(անուն ազգանուն, ստորագրություն)<br>Կ. Տ. | *Անվանումը՝* «Խնամք» հասարակական կազմակերպություն<br>*Հասցեն՝* ՀՀ, ք. Երևան, Մոլդովական 2-1<br>"Ամերիաբանկ" ՓԲԸ<br>Հ/Հ 1570002500330100<br>ՀՎՀՀ՝ 00845121<br>Տնօրեն՝ Վահագն Մաժինյան<br>(անուն ազգանուն, ստորագրություն)<br>Կ. Տ. |

Հավելված 5
2022թ. «01» «18» -ին
կնքված N ԴՏՊ-1160-11013/Մ-3 պայմանագրի

Պայմանագրի կողմ
______________________
______________________
գտնվելու վայրը ____________
հհ ______________________
հվհհ _____________________

Պետական մարմին
______________________
______________________
գտնվելու վայրը ____________
հհ______________________
հվհհ_____________________

**ԱԿՏ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*« » « » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պետական մարմինը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ---- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

| N | Իրականացված միջոցառման | | | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | գործառույթի համառոտ նկարագիրը | արդյունքը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրի | փաստացի | ըստ պայմանագրի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| **ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ** | **ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ** |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ք. Երևան, Կառավարական տուն-3<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011039675<br>ՀՎՀՀ՝ 01506515<br>Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան<br>______________________<br>(անուն ազգանուն, ստորագրություն)<br>Կ. Տ. | *Անվանումը*՝ «Խնամք» հասարակական կազմակերպություն<br>*Հասցեն*՝ ՀՀ, ք. Երևան, Մոլդովական 2-1<br>"Ամերիաբանկ" ՓԲԸ<br>Հ/Հ 1570002500330100<br>ՀՎՀՀ՝ 00845121<br>Տնօրեն՝ Վահագն Մաժինյան<br>______________________<br>(անուն ազգանուն, ստորագրություն)<br>Կ. Տ. |

Հավելված 6
2022 թ. «01» «18» -ին
կնքված N ԴՏՊ-1160-11013/Մ-3 պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

| NN ը/կ | Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | նկարագիրը | կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները | ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները | միջոցառման իրականացման վերջնաժամկետը | հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը | պահանջվող գումարը (դրամ) |
| | «Հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ համայնքահենք փոքր խմբային տներում | Ծրագրի հիմնական նպատակն է հաշմանդամություն ունեցող, այդ թվում մտավոր և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող 18 տարին լրացած անձանց (այսուհետ՝ շահառու) կացարանով ապահովումը և, շուրջօրյա խնամքի ու սոցիալական վերականգնման ծառայությունների տրամադրման միջոցով, նրանց սոցիալական ներառումը հասարակություն: Ծառայություններից կարող են օգտվել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, կացարանի և խնամքի ու այլ սոցիալական ծառայությունների կարիք | Կազմակերպությունը, ըստ շահառուի գնահատված կարիքի, տրամադրում է հետևյալ ծառայությունները՝<br>1) ապահովում է կացարանով, անհրաժեշտ կահույքով.<br>2) հագուստով, սպիտակեղենով, կոշկեղենով՝ տարիքասեռային առանձնահատկություններին և եղանակային պայմաններին համապատասխան<br>3) անկողնային պարագաներով.<br>4) անձնական հիգիենայի պարագաներով.<br>5) սննդով՝ առնվազն օրական երեք անգամ, ընդ որում, հատուկ սննդակարգի կարիք ունեցող շահառուներին տրամադրվում է բժշկի | Խմբային տունն ապահովում է հետևյալ որակական ցուցանիշները.<br>1) շահառուներին անհրաժեշտ բնակելի տարածքով և կոմունալ-կենցաղային այլ պայմաններով ապահովում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 17-ի N N 1533-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչների<br>2) սոցիալ-հոգեբանական խորհրդատվության տրամադրում տարեկան յուրաքանչյուր շահառուին առնվազն 8 անգամ և ըստ անհրաժեշտության, կատարելով համապատասխան գրառումներ՝ ըստ առանձին | 31.12.2022 | Կատարված աշխատանքների վերաբերյալ կազմակերպությունը ներկայացնում է ամսական հաշվետվություն և կատարված աշխատանքների արդյունքային որակական ցուցանիշների ապահովման ուղղությամբ եռամսյակը մեկ անգամ տեղեկատվություն է ներկայացնում Նախարարություն:<br><br>(info@mlsa.am էլեկտրոնային հասցեին ուղարկելու միջոցով) | **21 090 290 (քսանմեկ միլիոն իննսուն հազար երկու հարյուր իննսուն) ՀՀ** դրամ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ունեցող 18 տարին լրացած՝ հաշմանդամություն ունեցող այն անձինք, որոնց ինքնասպասարկման ունակությունները և սոցիալական հմտություններն ու կարողությունները հիմնականում պահպանված են և նրանք կարող են ինքնուրույն ապրել, կենցաղավարել (մասամբ՝ սոցիալական սպասարկողի օգնությամբ), սակայն կամ՝ չունեն կացարան ու ընտանիք, կամ՝ ընտանիքը հրաժարվել է նրանց խնամքից: Շուրջօրյա խնամքի ծառայությունները տրամադրվում են առավելագույնս ընտանեկանին մոտ պայմաններում՝ փոքր խմբային տներում:<br><br>Ծրագիրն իրականացվում է դրամաշնորհի տրամադրման մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) կողմից: | կողմից նշանակված դիետիկ սնունդ.<br>6) ըստ անհրաժեշտության՝ ամենօրյա կամ որոշակի պարբերականությամբ բուժքննության իրականացում՝ կազմակերպության գտնվելու վայրի տարածքային սպասարկման պոլիկլինիկայի միջոցով կամ կազմակերպության բժշկի կողմից.<br>7) հոգեբույժի խորհրդատվությամբ՝ առնվազն ամիսը մեկ անգամ և ըստ անհրաժեշտության.<br>8)սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրում.<br>9)իրավական խորհրդատվության տրամադրում.<br>10) ըստ անհրաժեշտության՝ կազմակերպում է աջակցող միջոցներով ապահովումը.<br>11) աջակցում է բժշկասոցիալական փորձա քննության իրականացման անհրաժեշտության դեպքում անհրաժեշտ բժշկական փաստաթղթերի ձեռքբերման, նախապատրաստման, բժշկական կազմակերպություններ ուղեկցման և այլ հարցերում. | ծառայությունների (սոցիալական խորհրդատվություն, հոգեբանական օգնություն), նշելով՝ ծառայություն ստացած անձանց անուն, ազգանունը և ծառայությունից օգտվելու ամսաթիվը, ինչպես նաև կատարում է համապատասխան գրառում շահառուների սոցիալական անհատական ծրագրում.<br>3)խմբային տան շահառուների կարիքների գնահատում տարեկան առնվազն մեկ անգամ, կատարելով համապատասխան գրառում շահառուների անհատական ծրագրերում.<br>4) աջակցություն խմբային տան շահառուների թվից տարեկան առնվազն մեկ հոգու աշխատանքի տեղավորման հարցում, համագործակցելով տարածքի զբաղվածության ծառայության կենտրոնի հետ.<br>5)աշխատանքային թերապիայի տարբեր տեսակներով զբաղվածության ապահովում | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Կազմակերպությունը ծառայությունները տրամադրելիս պետք է առաջնորդվի՝<br>• «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքով<br>• «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով<br>• ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 17-ի N 1533-Ն որոշմամբ և ոլորտը կանոնակարգող այլ իրավական ակտերով:<br><br>Կազմակերպությունը աշխատանքերն իրականացնում է շահառու կարիքների գնահատման արդյունքում ձևավորված անհատական սոցիալ-վերականգնողական ծրագրին համապատասխան: Գնահատման ձևաչափը և սոցիալ-վերականգնողական | 12) աջակցում է հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություն ուղեգրման գործընթացին.<br>13) ազատ ժամանցի կազմակերպումը.<br>14) մշակութային և մարզական միջոցառումների կազմակերպում կամ անցկացում, տարբեր խմբակների կազմակերպում՝ ըստ շահառուների նախասիրության.<br>15)աշխատանքային թերապիայի և արտթերապիայի կազմակերպումը և իրականացումը. զբաղվածության ապահովումը.<br>16) ինքնասպասարկման ունակությունների զարգացում և կենցաղավարման հմտությունների ուսուցանում.<br>17) անձի վերականգնմանն ու սոցիալականացմանն ուղղված այլ աշխատանքներ: | 6) մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում տարեկան առնվազն 8 անգամ, յուրաքանչյուր եռամսյակ՝ առնվազն 2 միջոցառում, ապահովելով յուրաքանչյուր միջոցառմանը խմբային տան շահառուների ընդհանուր թվի առնվազն 90 %-ի մասնակցությունը<br>7) կարողությունների, հմտությունների զարգացմանն ուղղված թրեյնինգների կազմակերպում՝ շահառուների առնվազն 80 %-ի մասնակցությամբ, այդ թվում՝ նաև աշխատանքային պրակտիկայի կազմակերպում:<br>8) Ըստ շահառուների թվի սոցիալ-վերականգնողական անհատական ծրագրերի առկայություն: | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | անհատական ծրագրի ծնաչափը մշակվում է նախարարության հետ համաձայնեցված մեթոդաբանությամբ (կցվում է): | | | | | |
| | **Ընդամենը** | | | | | | |

**Լրացուցիչ դրույթներ**

- Ծառայություններ տրամադրող կազմակերպությունը (կազմակերպությունները) պետք է լինի հոգեկան (մտավոր) առողջության ոլորտում մասնագիտացված և լիազոր մարմնում հավաստագրված, համալրված լինի համապատասխան մասնագետներով, ունենա առողջապահության կամ սոցիալական պաշտպանության ոլորտում աշխատանքի առնվազն մեկ տարվա փորձ:
- Հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ մատուցելու նպատակով կազմակերպությունը պետք է ապահովի տարածքի մատչելիությունը (թեքահարթակ, վերելակ, սանհանգույց, հարմարեցված գույք և այլն), տրանսպորտային միջոցի առկայություն՝ շահառուների տեղափոխումը, ըստ անհրաժեշտության կազմակերպելու նպատակով և ունենա մասնագիտական անձնակազմ:
- Մեկ խմբային տանը կարող են ապրել միայն մտավոր կամ միայն հոգեկան առողջություն խնդիրներ ունեցող շահառուներ:

| **ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ** | **ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ** |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ք. Երևան, Կառավարական տուն-3<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ900011039675<br>ՀՎՀՀ՝ 01506515<br>Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան<br>______________________<br>(անուն ազգանուն, ստորագրություն)<br>Կ. Տ. | *Անվանումը՝* «Խնամք» հասարակական կազմակերպություն<br>*Հասցեն՝* ՀՀ, ք. Երևան, Մոլդովական 2-1<br>"Ամերիաբանկ" ФԲԸ<br>Հ/Հ 1570002500330100<br>ՀՎՀՀ՝ 00845121<br>Տնօրեն՝ Վահագն Մաժինյան<br>______________________<br>(անուն ազգանուն, ստորագրություն)<br>Կ. Տ. |